

նուրէ կ'ընդունին: Պիտի կատարէ երեկոյթներ, հանդէսներ, ընկերական գումարամբներ, դասախօսութիւններ, բանախօսութիւններ և այլն: Այս ամէնն պիտի կատարէ միութիւնը պարզ հայ մտքի և գիտութեան զարգացման համար:

13. Քիչ մ'ալ Քիւրախէն. — Բիւրակնի 3 դեկտ. 1898 պրակին մէջ կը կարդանք շայ ազգագրական հոռմ Յիւրիք վերնագրով Պ. Խալկոնցի մի հետաքրքրական յօդուածը, զոր հմտալից կը տեսնենք. միայն մի տեղ անշուշտ Պ. յօդուածագիրը թոյլ կու տայ մեզ հարցընելու՝ թէ ինչ ինչ կենդանեաց անուններու բացատրութիւնն՝ կարելի է որոշապէս լուծել, զոր չէ համարձակած մեծ հնախօս Նահապետն (Հմմտ. Հին Հասարգ Հայոց, Ալիշան, էջ 167). մեր այս հարցման նպատակն քննադատել չէ իւր յօդուածն, ուր կ'ըսէ թէ Արտաշատգահաւ, Յովհաննեհաւ և այլն, կը նշանակեն Արտասաղղ, Յովհաննէս կամ Յովհաննա անունով մէկը՝ հաւի փոխուած, այլ իմանալ, (թէ կայ) արժանահաւատ հաստատական փաստ մը այս հետաքրքրական ստուգուելիք բացատրութեանց մասին: Մենք կը կարծենք թէ սոյն կենդանաբանական անուններն յառաջ եկած ըլլան, այս կամ այն հաւն Արտասաղղ կամ Յովհաննա անունամբ մին շատ սիրելով հաւուն սեփականուած ըլլալ Արտաշատգահաւ, կամ Յովհաննեհաւ անունն. բայց այս եւս կարծիք ըլլալով՝ կարող չէ մեր հետաքրքրութիւնը գոհացընել:

ՅԵՂԵԿԱՅԻՐ



## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄԻՍ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 27



### ՄԻԱՑԵԱԼ ՆԱԱԼԱԳԳ ԵՒ ՍՊԱՆԻԱ

ՔՐԻՈՒՑ պետութեանց մէջ խաղաղութեան դաշինքը վերջապէս ստորագրուեցաւ Դեկտեմբեր 10ին, կը մնայ միայն սպանիական խորհրդարանաց և ամերիկեան համաժողովոյն հաւանութիւնքը և Հաստատութիւնքը: Ստորագրեցէն առաջ սպանիական նախարակաց զու-

լալ ծանոյց, որ Սպանիա տեղիք կու տար զօրաւորի մը առջեւ և կը բողոքէր յանուն ընդհանուր խղճի, ազգաց իրաւանց դէմ եղած բռնութեան մը համար՝ ընդդէմ իւր հայրենեաց: Սպանիա բաց ի Կուբայէ և Պորտո Ռիկոյէ, կը կորսնցնէ Նաեւ Փլէիսպեան կղզիները, ստանալով կէս միլիար վճարք մը: Սըղէն երեսփոխանաց ոմանք կ'ուզեն առաջարկել, վերցնելու Պաղթականութեան պաշտօնարանը:

Որչափ շահաւոր պիտի ըլլար Սպանիա՝ եթէ պատերազմի չսկսած, հաշուէք ըլլար, ըստ աւետարանական առածին, իւր զօրութիւնքը և ներքին քաղաքական վիճակը: Եւ արդեօք ասոնք վերջին զոհերն են իրեն համար:

Ամերիկացի զօրավարն Բրուք՝ զինուորական զարիւ անձանեանցաւ Կուբայի: Յարգ ամերիկացիք կ'ըսեն մը չեն յայտներ կղզւոյն կառավարութիւնը կղզեացւոց յանձնելու: Փիլիպպեան կղզեաց մէջ խառնակութիւնը կը շարունակէ: Ապստամբք չեն ուղեր խոնարհիլ Ամերիկացւոց: Ար համարենք որ ժողովրդախումբ քաղաքականութիւն մը պիտի ըլլայ, սահմանելու կամ ինքնավարութիւն մը ընդ բարձր հովանաւորութեամբ Միացեալ Նահանգաց, և կամ պարզապէս միութիւն ընդ Միացեալ Նահանգս:

### ԱՒՍՏՐԻԱ

Երբեք զահակալ մը իւր յորելեանին առթիւ աւելի գեր ահաւած չէ իւր ժողովրդէն, ինչպէս Փրանկիսկոս տեսաւ ամբողջ տարւոյս մէջ և ի մասնաւորի Դեկտեմբեր 2ին: Անհնար է նկարագրել մտքամառն: Բոլոր Աւստրիա յանկարծ միակ ընտանեաց մը կերպարանք առաւ, որուն սիրելի զուխը ներկայացաւ կայսրի Փրանկիսկոս Յովսէփ: Այս հանդէսները ունեցան իրենց բարեգործական նպատակքը եւս: Ի յիշատակ յորելինին բարեգործական հաստատութեան մը համար, զիջ օրուան մէջ երեսուն միլիոն ֆրոնքին հաւաքուեցաւ: Կայսրը այս սուրաւութեանց օրերը առանձին քաշուած անցուց իւր երկու զստերաց, և Ստէֆանիա արշիդքոս: Հոյն և Թունաց հետ: Վեննա ինքնիմէ զուրս ելած էր և չէր դիտեր ինչ պատիւներ ընել կայսրեր, որ զիջ ամիս առաջ հաւաքու ոտք մը ունեցեր էր: Միայն Հունգարիոյ Խորհրդարանին մէջ Քուռաթ հակառակ կեցաւ Դեկտեմբեր 2ին տոնախմբութեան, պատճառելով որ այդ թուականը Աւստրիոյ կը պատկանէր և վերաբերուէր ինքն մը չունէր Սահաւաց թաղաւորութեան

հետ: Նոյեմբեր 28ին աւստրիական խորհրդաւրանին մէջ հարցոնեցաւ այն բազմաթիւ աւստրիացեաց նկատմամբ, զորս կ'արտաքօնէ Ռուսիական ստրկանութիւնը իւր հողերէն: Իւ որչափ որ աւստրիացի վարչաւթիւնը հանդարտ պատասխան մը տուաւ: սակայն գերման լրագիրք սղառնալիք մը տեսաւ յայնմ, ե կարծուեցաւ որ ցրտանութիւն մը տրե՛ երկուց վարչաւթիւնը մէջ: Սակայն փութով դարձաւ համաձայնութիւնը վարչական շրջանակաց մէջ:

Հունգարական խորհրդարանը առաջնապէս զրուիեան մը մէջ է յետ նախագահին հրաժարմանը, որուն յաջորդեց խռուաթիւյ Ետերպովի պաշտօնէին հրաժարականը: որով սղառնական գիրք մը ստացան խռուաթ երեսփոխաններէն շատերը: Յակաւին չքուէարկուեցաւ Աւստրիոյ հետ համաձայնութիւնը, ընդդիմակցեցի խափանողութեան պատճառաւ, և թէպէտ առաջին պաշտօնեայն Բանֆի՝ Վէննա երթալով հաստատուն գտաւ իւր վրայ Փրանկիւկոս Յովսէփ կայսեր վստահութիւնը, սակայն քաղաքական զրից բարւոքութիւն չտեսնուեցաւ: խորհրդարանը բացուեցաւ Գեկտեմբեր 17ին, սակայն անհնար եղաւ նոր նախագահի ընտրութեան: Նայն իսկ որը սահմանեց:

Գեկտեմբեր 6ին աւստրիական խորհրդարանի գումարման մէջ, Նելեմտից պաշտօնեայն ժանոյց կայսրութեան զրամական բարւոք վիճակը, որով կը յուսացուի փութով ոչ միայն հաստատութիւն մը ելեւմտից, այլ և առաւելու թիւն մը մտից:

#### Փ Ա Լ Լ Ի Ա

Ի Գալլիա կը շարունակէ Պիկար հաղթապետին, կամ նոյն է ըսել, զԵյֆուսական խնդիրը: Վճառեկ Ատեանը սահմանեց որ զինուորական Ատեանը Պիկարի դատը տեսնէ, Գրէյֆուտի դատէն վերջը, որպէս զի դատաստանական հակասութիւնը չծնանին: Հրաման տուեցաւ Գրէյֆուտի տիկնոջ հետադիմել առ իւր ամուսինը և պատասխան ընդունիլ:

Խորհրդարանին մէջ կը շարունակեն տակաւին զԵյֆուսական խնդրոյն նկատմամբ պայքարները: որոնք աւելի կը նուստատացնեն թէ նախկին վարչաւթիւնքը և թէ բանակը: Նախագահ պաշտօնեայն Տիւփիւր, ինչպէս նաեւ պատերազմի պաշտօնեայն Ֆրէյսթինէ, ծանուցին որ կան զադտնի ամբաստանագիրքը և զոր չեն կրնար յանձնել Վճառեկ Ատենին, մինչև որ երեսնց երաշխաւորութիւն մը չարուի որ այդ

Թուղթերը պիտի չհրատարակուին: Վարչաւթեան այս կարծիքը ստացաւ 370 քուէ ընդդէմ 80 քուէից: Խորհրդարանին մէջ բուռն խօսակցութեանց նիւթ եղաւ Ալենբրիոյ վիճակը, ուր հակահրեականք, որոց զլուս կեցած է Մաքս Ռեժիս, Ալենբրիոյ քաղաքագլուխը կը պահանջեն հալածանք մը ընդդէմ հրեից, զրկելով զանոնք քաղաքական իրաւունքներէ: Երեսփոխանաց մին Կրեմսն՝ մինչև վախցուց որ Ալենբրի նոյնը պիտի ըլլայ Գալլիոյ համար, ինչ որ կուրա եղաւ Սպանիացեաց: Պաշտօնարանին նախագահը Տիւփիւր, այս առթիւ ետանդուն պաշտպանութիւն մը ըրաւ վարչաւթեան գործածին և խղճի պաշտօնութեան սկզբան համար, որ ստացաւ խորհրդարանին զրեթէ բովանդակ քուէները և վճառեցաւ որ իւր խօսքը կցցուի Ալենբրի քաղաքաց որմոց վրայ: Երեսփոխան քահանայն լըմիր աւելցուց՝ որ Հոռովմայ քահանայապետք միշտ պաշտպանուի եկն խեղճ հրեաները ի հալածանաց, և իւր այս յայտարարութիւնը ծափահարութեամբ ընդունեցան աշակողմանքը և կեդրոնը:

Քուէարկուեցաւ նաեւ Խոտալիոյ հետ վաճառականական դաշինքը 607 քուէիւք, ընդդէմ 20 քուէից: Երբ Ֆիրմիս Ծոր երեսփոխանը աւելցն նախատել զԽոտալցիս, ամէն կողմէն ձայներ բարձրացան, և ծափահարութեան Տիւփիւր յի այն խօսքերը՝ որովք կը յայտնէր թէ « փոքր շահ չէ այսպիսի ժամանակներու մէջ սահմանակից բարեկամ մը շահիլ »:

#### Փ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Գերմանիոյ կայսրը և կայսրուհին հասան Ի Պոդգրաճ Նոյեմբեր 26ին: Կայսրը անմիջապէս յայտնեց Պետութեան պաշտօնէից՝ Պաղեատինոս ուղեւորութեան տպաւորութիւնքը և արդիւնքները, և ամէն կողմ գերման քաղթականութեանց յառաջադիմութիւնը: Գեկտեմբերին հանդիտապէս մտաւ ի Բէռլին և 6ին բացաւ խորհրդարանը, որ սկսեալ իւր աշխատութիւնքը ելեւմտից ընկերցմամբ: Այս առթիւ Ֆոն Բուլոֆ Կայսրութեան Արտաքին գործոց պաշտօնեայն, նշանաւոր յայտարարութիւնք ըրաւ ընդհանուր քաղաքականութեան նկատմամբ, Մանից որ Արեւելեան խնդիրը խաղաղած է միայն թէ կան կնճճուք: Ի Պալքեանոս ուրոնք որ մը կրնան նոր յուզմանց պատճառ ըլլալ: Յայտնեց որ 1871էն ի վեր Գերմանիա ինքնին կը պաշտպանէ յԱրեւելս իւր հպատակը: Խօսեցաւ և Աւստրիացի հպատակաց

արտաքին ման վրայ ի Բրուսելոյ, քանի որ կը գտնուէին Պետութեան կարգաց հակառակ վիճակի մը մէջ, և մեղադրեց զիման թուն որ « չէր չափած բաւականապէս իւր բառերուն ոյժը » Անշնուց, սակայն, որ այսօրինակ խնդիրք բնաւ չեն տկարացներ Երեւելին Կաշնակցութիւնը, որ հաստատուած է ապահով հիման վրայ: Իմացուց որ Գերմանիա չէր ուզած խառնուիլ կրէտական խնդրոյն մէջ, և սակայն փափագած էր չորս պետութեանց ծրագրին երեքը դժուարութիւն չարուցանել:

Յուն Բուլղոթի յայտնութիւնները, մանաւանդ բալկանեան ազգաց նկատմամբ շատ մեկնաբանութեանց ներթ եղաւ. մանաւանդ որ կայսրը ուղեւորութենէ զարձէն վերջը՝ կը լնայ բանակին առաւել ոյժ ի թիւ տալու:

### Ի Տ Ա Լ Ի Ա

Նոյեմբեր 24ին սկսաւ Անիշխանական դէմ ժողովար ի Հնովմ, ընդ նախագահութեամբ Առնէվար ծովակալին, արտաքին գործոց պաշտօնէին Խտալիոյ: Ամէն Պետութիւնը դեսպան կամ նուիրակ զրկած են: Գումարմանց մէջի խօսակցութիւնք և վճիռք կը պահանջին յետին ծածկութեամբ. և ցարդ բան մը իմացուած չէ:

Խտալիոյ ամէն կողմէն իջձիկ կու գան առ վարչութիւնը, Միլանու չփոխից մէջ յանցաւոր դատուած լրագրագետաց բանտարկութենէ ազատութեան համար, յորս է Տօն Ալքէրտաբո քահանայն, որուն պատարագելու հրաման տրուած է, և փառաբանն Ռոմուսոսի՝ Սէկուլո լրագրին խմբագրագետը: Սակայն վարչութիւնը և մանաւանդ Պաշտօնարանին նախագահը՝ զորավարն Պէլլու, առ ժամս բնաւ ունկնդրութիւն չեն ուզեր ընել: Պահպանողական մասը լաւ կը համարի խիստ գտնուելու, որպէս զի կրկին անգամ չպատահին չփոխութիւնք: Պաշտօնարանը շատ հաստատուն չի կարծուիր, մասնաւորապէս Ելեւմտից պաշտօնեայն, որուն ծրագրերը շատ պարզութեամբ ընդունուեցան:

### Կ Ե Տ Ե

Գեորգիոս իշխանը յետ փառաբանական աղօթից յԱթէնս, ըսմանակ արգենական ընտանեօք ժողովորդեան անկարագրելի ուրախութեանց մէջէն անցնելով, հասաւ ի Պիրէն, ուր մտաւ յունական մարտնաւ մը և Գեկտեմբեր 20ին հասաւ ի Միւր կղզին, ուր իրեն զիմաւորելու եկած էին չորս Պետութեանց ծու

վակալք, որոնք ողջունեցին զինքը թնդանօթից ձայնեով: Նոյն դիւերը մտնելով զալլիական Բիւթօ մարտանաւը՝ երկրորդ օրը հասաւ ի Սուտա, ուր առաջին անգամ պարզեց կրէտէն ինքնավար դքսը, և զոր ողջունեցին չորս պետութեանց թնդանօթից ըսմանք: Սուտայէն հասաւ ի Կանէա, անցնելով անթիւ ժողովրդոց մէջէն՝ յորոց բազումք ուրախութենէն կ'արտասուէին: Մտաւ յեկեղեցին և նախ գոհութիւն մատոյց Աստուծոյ. արդէն չորս ծովակալք յայտարարութեամբ առ կղզեցիս՝ ծանուցեր էին իշխանին գալուստը, յանձնարարելով որ մոռնան անցեալը և յայտմհետէ քրիստոնեայք և մահմէտականք, երկուքն եւս Նոյն կղզոյն շաւակք՝ ապրին եղբայրութեամբ: Կանէացի կուսակալութեան պալատտան մէջ զալլիացի ծովակալն Պոցթէն, առաջ ի ծովակալս, յանուն չորս Պետութեանց, իւր երեք տարուան զործակատար, նոցա կողմանէ, Գեորգիոս իշխանին յանձնեց կղզւոյն վարչութիւնը: Եւ իշխանը ընդունեցաւ, շնորհակալ ըլլալով չորս Պետութեանց և խոստանալով անխախտ աշխատելու իւր հպատակաց երջանկութեան համար: Յայտնէ, որ Գեորգիոս իշխանին պաշտօնը շատ դժուարութիւններու պիտի չանդիպի, և շատ դժուար պիտի չըլլայ խաղաղել և կարգաւորել երկիրը: Նույն Տրոգի օգնութիւնը առ ժամս փառուած կը տեսնուի. չորս Պետութիւնք իրեն մէջ մէկ միւրոն ֆրանք փոխ տալու յանձն առած են. բայց ինչ է այդ՝ եթէ երկիրը չտրէ իւր դրամը: Եւ որովհետեւ Կրեթէ մասն կը կազմէ Թուրքիոյ, այն պատճառաւ սահմանուած է՝ որ Թուրքիոյ Հասարակաց Պարտոց նկատմամբ պարտքերը կատարէ և վճարէ եւս սահմանելիք տուրքը:

### Ս Պ Ա Ն Ի Ա

Յետ ի զուր Եւրոպիոյ Պետութիւններէն օգնութիւն և միջնորդութիւն մը յուսաւուր, Սպանիա տեղիք տուեր էր Միացեալ Նահանգաց հետ զաշանց մէջ, զօհնով և զքիլիպպեանս, որոց նկատմամբ չկար խնդիր մը խաղաղութեան նախասահմանաց մէջ: Առ այս սակայն կրկին հարկ է հարցնել խորհրդարանաց կամքը: Տարակոյտ չկայ որ ընդունի հաստատութիւնը, զի հասարակագետականք և կարլոսեանք մտադիր են ներկայ չգտնուելու քուէարկութեան: Պաշտօնարանին նախագահը Սաքատտա արագէն մտադիր էր իւր հրաժարականը տալու քեկտեմբեր 19ին, սակայն հեռանկարութիւնը ար-

գերեւ եղաւ իրեն: Այսու հանդերձ պաշտօնաւորանական տաքնապը սկսած իր համարուի, և իր կարծուի որ վարչութեան գլուխ անցնի Մոնտէրո Ռիոս, Միացեալ նահանգաց հետ իսաւրապութեան բանակցողներէն զվտարը: Վարչութիւնը ամէն արթնութիւն և խոտոտիւն սկսաւ բանեցնել Կարլոսեանց նկատմամբ որք ծածուկ գործունէութիւնը վերջնոր շատ կողմնակիցներ շահեցաւ: Սակայն Կարլոսեան վերանորոգումն մի շատ հեռու կ'երեւայ տակաւին, վասն զի Տոն Կարլոս չունի զբաժանկան ընդարձակ միջոցներ:

Մ-Ն.



ԳԱՂՈՒԱԾ 307ՈՒԱԾՈՅ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԹԵՐԹԻՑ

ԱՆԱՀԻՏ (Դեկտ. թիւ 2), Բարեկ:

Իսաւրապութեան Սերգեյ ԶՈՒՆԵԱՆ: — Հայուն ջղերը — ՏՐ. ՊՈՂՈՍ ՓՈԼՈՒԵԱՆ:

ԱՐԱՐԱՍ (Հոկտեմբեր), Վաղարշապատ:

Քաղաքածք ի կոնդակաց վեհապառ հայրապետի: — Քաղաքածք սինդի օրադարձութիւնից: — Հայոց եկեղեցւոյ առաջին մասնակցութիւնը դաւանական վեճերի մէջ և Բաբլէն կաթողիկոս — Կ. Վ.: — Կոմիտաս կաթողիկոսի մի նոր արձանագրութիւն — ԳՐԻԳՈՐ Վ. ՅԱՎԱԼԻԿԱՆ: — Պարսկաստան (տեղադրութիւն) (շարք): — Յանքուզի: Թաւրիշ Հայոց ի Պարսոս առ ողջաբանութեամբ:

ԱՐ. ՄԱՄՈՒԼ (Թիւ 21), Զմիւռնիա:

Հետեւողութեան ոգի: — (Թիւ 22) Տեղադրական պատառիկներ (շարք):

ԱՐԵՒԵԼ (Թիւ, 3845), Կ. Պոլիս:

Լեզուական խնդիրներ — ՀՐԱՆՑ ԱՍՏՈՐ: — (Թիւ 3849) Երջն (Բ.): — (Թիւ 3853) Գրական և կրթական ընկերութիւնները թրքական լայն մէջ — ՍԿԱՆԼ ԲԱՆԱՍԻ: — (Թիւ 3854) Երջն: — (Թիւ 3855) Պաշտօնի եկեղեցին ու թանգարանը — Բ. Գ. Մ.: — (Թիւ 3859) Լեզուական խնդիրներ — Գ. ԱՆԻՐԵԱՍ ՍԵԱՆ: — Մեր պատմութեանը — ՀՐԱՆՑ ԱՍՏՈՐ: — (Թիւ 3865) Գաւառի պատկերներ — ԳԵՐԵՆԵԱՅ: — (Թիւ 3871) Ս. Երկիր, և այլն. — ՎՐՈՏԻ: — Ե. Դուրեան եպիսկոպոս — ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԱՊԵՆԱՆ:

ԱՐՄԷՆԻԱ (Թիւ 29), Մարտի:

Սպանաւորիկեան պատերազմը և Հայերն (շարք): — ԱՌՅՈՒՆ: — (Թիւ 30) Երջն: — (Թիւ 36) Երջն: — (Թիւ 37) Երջն:

ԲԻԽԱՆԻՆԻՍ (Թիւ 615), Կ. Պոլիս:

Գրականութիւնը (Գ.) — ԳՐԱՍԵՐ ԱՅՈՒՍ: — (Թիւ 618) Թէ Բնչպէս հայ զաղթականն:

Թիւն մը իր փճանայ — ԳԱՂՈՒԱԾ: — Զեռնեղեցութեան ոգին պակասութիւնն Հայոց մէջ — Կ. ԱՎՈՒ:

ԲԻԽԱՆԻՍ (Թիւ 39), Կ. Պոլիս:

Պոլիս ու դաւաճական զբաղմունքիւն — Կ.: Տոհմային կրթութիւն — Գ. ԱՆԻՐԵԱՍԵԱՆ: — Տղերի զերքն ու իջեցայախները — ԿՐԻՍՏԱՆՅԱՆ: — (Թիւ 40) Գրաւար և աշխարհաբար — ԳՐԱՍԵՐ ԱՅՈՒՍ: — Ուսուցչին ընտրելի միջոցները: — Գ. ԱՆԻՐԵԱՍԵԱՆ: — (Թիւ 41, 42) Հետազոտութիւններ Հայերենի բաղդատական համաձայնութեան (շարք): — Թրք. Գ. Ի.: — Հայ աշուղներ (շարք): — Տ. Վ. ՊԱԼԱՆ: — (Թիւ 43) Գրաւար և աշխարհաբար — ԳՐԱՍԵՐ ԱՅՈՒՍ: — (Թիւ 44) Եղևյա (շարք): — ԲԱՐԳԵՆ ՎՐԻԳ.:

ՀԱՆՐԱՅՍ ՄԱՍ. (Դեկտեմբեր), Վիեննա:

Հայք ի Զմիւռնիա — Հ. Բ. ՔՈՍԵԱՆ: — Պրոֆ. Ա. Արծրունի — Կ. ԻՆԻՐԵԱՆ: — Բէստէն Մ. Բժիշկ Տ. Պետրոսեան — ՏՐԲ. ՎԱՆԻՐ. Բ. ԹՈՐՈՒՍ: — Աստղաբաշխական: — Եղևարեթուպոսի քաղաքաշինութեան և Զատիկեան զերթայտանին մէջ անհամաձայնութիւնը (շարք): — ԿՈՎԼ. ԱՆԵՍԻ: — Մաւտեմախոսական: — ԱՅԿԱՅԱՅՂ: — ԴՄԱՂ. ԿԵԿԵՆԵՅ:

ՀԱՆՐԱՅԻՍԱՆ (Թիւ 33), Կ. Պոլիս:

Հանրագրտակի նկատմամբ դիտողութիւն մը: — Թէ Բնչպէս կրթողիկէները տուգինու մէջ իր պահէն (շարք): — Գրեմախնձորի մշակութիւն — Ղ. ԲՈՒԱՆ: Երամաբանութիւնը Բաթմէօրեան զրուութեանով — Ղ. ԲՈՒԱՆ: — Արհեստական դիտողներ: — Հարցում (օգտակար) (և պատմութեան) — Ղ. ԲՈՒԱՆ: — (Թիւ 34) Մանկավարժական — ԶԱՐԵՆ ԵՆՄԵՆ: — Որովայնախոսութիւնը — ՄԻՆԻ: — ՄԵՔԵՆԻՍԻԱՆ — Ղ. ԲՈՒԱՆ: — Երկրագործական (շարք) — Մ. Կ. ՄԱԼԱՍԵԱՆ: — Երկիջ շինեցու արհեստ — Ղ. ԲՈՒԱՆ: — Առողջապահական — ՄԻՆԻ: — Երամաբանութիւնը Բաթմէօրեան զրուութեանով — Ղ. ԲՈՒԱՆ:

ՄՇԱԿ (Թիւ. 193), Տփլիս:

Ա. Մովսէս Խորենացի (շարք): — ԿՐԱՍԵՐ ԲԻԽԱՆՆԱՆ: — (Թիւ 195) Երջն: — (Թիւ 197) Հայ կիսանքէն: — (Թիւ 201) Խորենացի... (շարք): — (Թիւ 202) Երջն (շարք): — (Թիւ 203) Ա. Մովսէս Խորենացի (շարք): — ԿՐԱՍԵՐ ԲԻԽԱՆՆԱՆ: — (Թիւ 205) Երջն: — (Թիւ 206) Խորենացի... (շարք): — (Թիւ 206) Երջն — ՍՏ. ՄԱԼԱՍԵԱՆ: — (Թիւ 211) Սաւադուր անցեալը — ԵՄԻՆԻՐ: — (Թիւ 216) Մովսէս Խորենացի (շարք): — ԿՐԱՍԵՐ ԲԻԽԱՆՆԱՆ: — (Թիւ 217) Երջն:

ԵԱՆԱԾ. — Մնացածները ուրիշ անգամ: